ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ (ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ) ՀԵՏ՝ ՍԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Վերապատրաստվող՝ Լուսինե Անանյան Արտուշի

Արարատի մարզ , Վերին Արտաշատի «Լուսնթագ » մանկապարտեզ

Վերապատրաստող՝ Ղազարյան Արմենուհի

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1.

1.1 Ընտանիք – մանկապարտեզ համագործակցության զարգացումը մանկավարժության պատմության մեջ 6

1.2 Ընտանիք – մանկապարտեզ համագործակցության և հաղորդակցման ժամանակակից ձևերը 9

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2. ԾՆՈՂԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ 14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Ներկա ժամանակաշրջանում նախադպրոցական հաստատությունների և ընտանիքի համագործակցության բացակայության, ծնողների անհետևողականության արդյունքում թերի է մնում երեխաների համակողմանի զարգացումը: Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացման գործընթացում առանձնահատուկ կարևորվում է ընտանիքի և նախադպրոցական կրթական հաստատության հաջորդական և փոխպայմանավորված մանկավարժական ներգործությունը: Երեխայի դաստիարակությունը սկսվում է ընտանիքում: Ընտանիքը սոցիալականացման առաջին օղակն է, ուր սկիզբ է առնում երեխայի սոցիալական էությունը: Ընտանիքը այն կայուն սոցիալական օղակն է, որն ուղեկցում և առաջնորդում է երեխային իր ողջ կյանքի ընթացքում: Նախադպրոցական կրթօջախների հիմնական մանկավարժական գործառույթը երեխայի դաստիարակության կազմակերպումն է հասակակիցների միջավայրում, նախադպրոցահասակ երեխաների հասարակական կյանքի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Մանկապարտեզում երեխան սկսում է հաղորդակցվել և համագործակցել, որոշումներ կայացնել, համադրելով սեփական ցանկություններն ու կարծիքը ընկերների ցանկությունների և կարծիքի հետ: Մանկավարժական ընդհանուր գործընթացի արդյունավետության երաշխիքը համագործակցության համար « բաց » կրթական հաստատություններն են : Կարևոր է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ակտիվ ներգրավումը մանկավարժական գործընթացին: Յուրաքանչյուր ծնող պետք է գիտակցի իր ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը երեխայի դաստիարակության գործընթացին, հանդես գա մանկավարժի օգնականի և աջակցի դերում, հրաժարվելով պահանջատիրոջ կարգավիճակից:

Նախադպրոցական մանկավարժության արդի խնդիրներից է ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության խթանումը: Սակայն, այսօր առկա են որոշակի հակասություններ, որոնք խաթարում են այդ համագործակցության ընթացքը , մասնավորապես.

- ✓ ծնողական կրթության կազմակերպման գործընթաց չի կիրառվում կամ կիրառվում է մասամբ,
- ✓ այդ ուղղությամբ տարվում է ոչ համարժեք մանկավարժական աշխատանք,ծ
- ✓ առկա են ծնողների հետ համագործակցության բազմաթիվ մեթոդներ, շփման ձևեր, սակայն չունեն կիրառություն:

Նշված հակասությունների շտկման անհրաժեշտությամբ է պայմանավորված տվյալ թեմայի ընտրությունը:

Հետազոտության նպատակը: Հիմնավորելով ծնողների և մանկապարտեզի պասիվ համագործակցությունը, մշակել ծնողների և նախադպրոցական ուսումնական հաստատության համագործակցության միջոցներ, գտնել ուղիներ:

Հետազոտության խնդիրները

1. Ուսումնասիրել և գնահատել ծնողների և մանկապարտեզի միջև գոյություն ունեցող համագործակցության ձևերը:
2. Ծանոթացնել ծնողներին մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացի առանձնահատկություններին, նախադպրոցական դաստիարակության և զարգացման ժամանակակից մոտեցումներին:
3. Ապահովել յուրաքանչյուր ծնողի ակտիվ մասնակցությունը մանկապարտեզի մանկավարժական գործընթացին:
4. Կազմակերպել աշխատանք ծնողների մանկավարժական գիտելիքների բավարարման ուղղությամբ:

Հետազոտության խնդիրների իրականացման նպատակով կիրառվել են հետևյալ մեթոդները.

զրույցի, անկետավորման , դիտման, զննման:

Հետազոտության կառուցվածքը. Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից, համակարգչային շարվածքով կազմում է 20 էջ:

ԳԼՈՒԽ 1

1.1 Ընտանիք–մանկապարտեզ համագործակցության զարգացումը մանկավարժության պատմության մեջ

Դարեր շարունակ երեխաների դաստիարակությունը իրականացվել է ընտանիքում և ուսումնական հաստատություններում: Բայց ահա 18-րդ դարում ընտանեկան դաստիարակության առնչությամբ հանդես եկան երեք ուղղություններ: Առաջին ուղղության կարկառուն ներկայացուցիչն էր Հ. Պեստալոցին: Նա հայրական տունը համարում էր բնական դաստիարակության հիմքը, գտնում էր, որ «մարդկանց ընտանեկան հարաբերություններն առավել բնական հարաբերություններ են և դաստիարակությունը՝ նույնպես»: Սակայն նա չէր ժխտում ուսումնական հաստատությունների դերը: Երկրորդ ուղղության ներկայացուցիչը անգլիացի ուտոպիստ սոցիալիստ Ռ. Օուենն էր: Նա բացասական կարծիք ուներ ընտանեկան դաստիարակության մասին: Այն համոզմանն էր որ ընտանեկան հարաբերությունները, երեսպաշտությունը բարոյապես այլանդակում է մարդկանց: Օուենը ընտանիքը համարում էր էգոիզմի և երեսպաշտության բույն: Նա կողմ էր դաստիարակության պետական համակարգին, որի միջոցով, ասում էր Օուենը , բոլոր երեխաները կստանան միատեսակ կրթություն և դաստիարակություն: Նա այն կածիքին էր, որ համակողմանի դաստիարակություն կարելի է ստանալ միայն պետական, հասարակական ուսումնական հաստատությունների ընձեռած հնարավորություններով:

Նոր ժամանակներում մեծ մտածողները, մանկավարժներն ու հոգեբանները պահանջեցին դաստիարակության բնագավառում ապահովել ընտանեկան, պետական և հասարակական ուսումնական հաստատությունների դաստիարակության կապը: Եվ ահա հանդես եկավ նաև երրորդ ուղղությունը, որի

ներկայացուցիչները միակարծիք են և իրար չեն հակադրվում։ Ա.Ս. Մակարենկոն ասում էր՝ «Ես գրեթե չեմ լսել , որ ծնողներն ասեն «Մենք պետք է դաստիարակենք, ինչու՞ է մանկապարտեզը խանգարում»։ Եվ չեմ էլ լսել, որ մանկավարժն ասի «Մանկապարտեզը պետք է դաստիարակի, ինչու՞ է ընտանիքը խանգարում »։ Ուրեմն եզրակացությունն այն է, որ երեխաների դաստիարակությունն իրականացվում է մանկապարտեզի և ընտանիքի համատեղ ջանքերով ։

Այնուամենայնիվ, ընտանիքի՝ երեխաների դաստիարակության գործում ունեցած կարևոր դերն անժխտելի է։ Ընտանիքը հասարակության առաջին սոցիալական օղակն է , ուր դրվում են երեխայի անձնավորության հիմքերը և կառուցվում է նրա սոցիալական կերպարը։ « Ընտանիքը երեխայի մթնոլորտն է , նրա մեջ աճում և զարգանում են երեխայի մտավոր ուժերը, նրա նրա հոգեկան զորությունները և բարոյական հատկությունները, բոլորն այն չափով, ինչ չափով նպաստում է դրան գերդաստանի կրթողական ազդեցությունը և այն ձևով, ինչ կերպարանք է տալիս նրան դաստիարակող ոգին » /Ռաֆֆի /։ Յ. Ա . Կոմենսկին նշում էր, որ « մայրիկի դասերը չունեն դասամիջոցներ, հանգստյան օրեր, արձակուրդ»։ Վերջապես «երեխան ընտանիքի հայելին է» սահմանում դարձած արտահայտությունն լիովին նկարագրում է և կարևորում ընտանիքի անփոխարինելի դերը երեխայի զարգացման և նրա անձնավորության ձևավորման գործում։ Ընտանիքը այն կայուն սոցիալական օղակն է, որն ուղեկցում և առաջնորդում է երեխային իր ողջ կյանքում։

Մանկապարտեզը և այլ նախադպրոցական կրթական հաստատություններ կոչված են իրականացնելու նախադպրոցական տարիքի երեխաների հասարակական դաստիարակությունը։ Մանկապարտեզում է երեխան սկսում հաղորդակցվել և համագործակցել , որոշումներ կայացնել , համադրելով սեփական ցանկություններն ու կարծիքը ընկերների ցանկությունների և կարծիքի հետ։

19-րդ դարի 70-ական թվականներին հայ իրականության մեջ ակտիվանում է նախադպրոցական դաստիարակության խնդիրը։ Հանդես են գալիս եվրոպական

կրթությամբ նախադպրոցական կրթության մասնագետներ, որոնք դառնում են մանկապարտեզային գործի առաջատարներ։ Դրանցից մեկն էր Սոֆյա Բաբայանը։ 1882 թվականին Թիֆլիսում Սոֆյա Բաբայանը բացեց առաջին հայկական մանկապարտեզը։ Նա նշում էր, որ «մանկան առաջին հասարակական միջավայրը ընտանիքն է : Այստեղ է սկզբնավորվում նրա բազմակողմանի զարգացումը։ Ծնողները պետք է հոգ տանեն հայ ազգի պահպանման և մայրենի լեզվի յուրացման համար։ Սկսած երեք տարեկանից անհրաժեշտ է կազմակերպել հասարակական դաստիարակություն։ Մանկապարտեզը 3-7 տարեկան երեխաների կրթության, դաստիարակության այն օջախն է, որը ոչ միայն նրանց ազատում է պարապությունից, չար ազդեցությունից, այլև դառնում հաճելի ժամանցի վայր մեծապես զարկ տալիս երեխաների ֆիզիկական, մտավոր ու բարոյական զարգացմանը»։

Սոֆյա Արղությանը իր արժանավոր տեղն ունի 19-րդ դարի երկրորդ կեսի հասարակական հախուռն շարժման և առաջավոր գաղափարներով լեցուն հայ անվանի կանանց շարքում։ Սոֆյա Արղությանի հասարակական ու մանկավարժական կեսդարյա գործունեությունը սերտորեն կապված է հայ ժողովրդի մշակույթի , մանկավարժական մտքի զարգացման հետ։ Երեխայի կրթությունն ու դաստիարակությունը պետք է սկսել վաղ տարիքից, և քանի որ ոչ բոլոր մայրերն են պատրաստ այդ գործին, ուստի, այն պետք է կազմակերպել մանկական պարտեզներում։ Անգետ ու վատառողջ զավակներ չունենալու համար իմաստուն մանկավարժները հնարել են մանկան պարտեզ, - գրում է Ռ . Պատկանյանը, - ուր երեխան շատ կանուխ և համարյա խաղով ու զբոսանքով կսովորի այն, ինչ ուրիշ հանգամանքների մեջ նա պիտի սովորեր առավել տարեց հասակի մեջ, անտանելի դժվարություններ կրելով և միանգամյա ժամանակ սպառելով բոլոր մտավոր և մարմնավոր ուժը։ Մանկական պարտեզը ամենալուսավորյալ ազգերը համարել են միակ կանոնավոր դաստիարակության և հիմնավոր նախապատրաստություն դեպի կրթություն և լուսավորություն , - այսպես է գնահատում Ռ. Պատկանյանը :

- ✓ Մանկական պարտեզը , - ինչպես գրում է Սոֆյա Արղությանը , - կրթության հաստատություն է 3 – 7 տարեկան փոքրիկների համար ՝ առանց խտրության, դասակարգի , կրոնի և սեռի։

Մանկավարժական գործունեության ընթացքում ծնողները հաճախ էին Արղությանին խնդրում օգնել իրենց երեխաների դաստիարակության գործում։ Արղությանը բազմիցս է այցելել Գերմանիա, Ֆրանսիա, Բելգիա, Ավստրիա, Դանիա, Շվեդիա հանդիպել առաջավոր մանկավարժներին, .ծանոթացել նրանց դաստիարակության համակարգին։ Հիացել է Էլիոնորա Հերվարդի գործունեությամբ, ում շնորհիվ Ֆրեոբելի ուսմունքը տարածվեց ամբողջ աշխարհում։ Այնուհետև Փարիզում, ցուցահանդեսի ժամանակ ծանոթանում է Մոնսեսսորու աշակերտուհու հետ , որը չէր հրաժարվում իր ուսուցչի դիդակտիկ նյութերից։ Նա Արղությանին է նվիրում Մոնտեսսորու գիրքը ՝ իտալերեն լեզվով։ Ըստ Արղությանի Ֆրեոբելն ու Մոնտեսսորին լրացնում են միմյանց, ճիշտ չեն նրանք, ովքեր կիրառում են բացառապես որևէ մեկի համակարգը։

1905 թվականին Թիֆլիսում լույս է տեսնում Արղությանի գիրքը «մանկական պարտեզ» վերնագրով, մայրերի և դաստիարակչուհիների համար, նոտաներով և նկարներով ։ Գրքում ամենայն խորությամբ ու իմացությամբ տրված ու մեկնաբանված են նախադպրոցական դաստիարակության հրատապ ու առաջնային տեսական ու գործնական հարցերը։ Ֆրեոբելաեվրոպական մտածելակերպով, բայց, որ ամենակարևորն է , տեղային – ազգային մտածելակերպով։

1. 2 Ընտանիք – մանկապարտեզ համագործակցության և հաղորդակցման ժամանակակից մոտեցումները

Երեխաների դաստրարակության, առողջության պահպանումը անհնար է պատկերացնել առանց ընտանիքի։ Ընտանիքում է դրվում երեխայի վաղ զարգացման հիմքերը։ Ծնողներն են, որ առաջին անգամ երեխային սովորեցնում են կյանքի այբուբենը, ձևավորում նրանց աշխարհընկալումը, բնավորության գծերը։ Նախադպրոցական կրթությունն աջակցում է ընտանիքին՝ իրականացնելու

համակարգված երեխայակենտրոն կրթություն։ Ծնողների՝ մանկապարտեզի մանկավարժական աշխատանքներին ակտիվ մասնակցությունից շահում են մանկապարտեզի մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտները։ Ծնողների ներկայությունը մանկապարտեզում վստահություն է ներշնչում երեխային և կրկնապատկում նրա սովորելու և աշխարհը ճանաչելու ցանկությունը։ Ծնողներն իրենց հերթին ձեռք են բերում չափազանց կարևոր մանկավարժական գիտելիքներ և կարողանում են գնահատել մանկավարժի ծանրագույն աշխատանքը։ Մանկապարտեզի և ընտանիքի փոխադարձ կապի ձևերը պարբերաբար վերանայվում և լրամշակվում են։ Համագործակցության ավանդական դարձած ձևերին ավելանում են ժամանակակից եղանակներ, որոնք բխում են հասարակության նախադպրոցական կրթությանը ներկայացվող այսօրվա պահանջներից ։ Ամենաավանդական ձևը մանկավարժի պարբերական այցելություններն են երեխաների ընտանիքներ։ Մանկավարժի հաճախակի այցելությունները հնարավորություն են տալիս ուսումնասիրելու երեխային տան պայմաններում, ծանոթանալու ընտանիքի բոլոր անդամներին և կենսական պայմաններին։ Ավանդական ձևերից են ծնողական ժողովները , բաց դռների օրը, կոնսուլտացիաները և հատուկ կազմակերպվող գիտական կոնֆերանսները ծնողներին հուզող թեմաների շուրջ։Գոյություն ունեն ծնողների հետ հաղորդակցման պաշտոնական և ոչ պաշտոնական շփման ձևեր ։

<u>Ոչ պաշտոնական շփման ձևեր</u>

<u>Երեխաներին մանկապարտեզ բերելն ու տանելը</u>

Աշխատող ծնողները հաճախ չեն ունենում երեխաներին տրամադրելու բավականաչափ ժամանակ ։ Նման դեպքերում տան և կրթարանի միջև անհրաժեշտ հաղորդակցման հաստատումը հնարավոր է դառնում բնական , ոչ պաշտոնական առիթների օգտագործման շնորհիվ։

<u>Երկտողներ և նմուշների թերթիկներ</u>

Երեխաների հետ տուն ուղարկվող հակիրճ , ոչ պաշտոնական երկտողը նպաստում է ընտանիքի և դաստիարակի միջև հաղորդակցման հաստատմանը : Նման երկտողները պետք է անդրադառնան երեխայի հերթական հաջողությանը , հմտության ձեռքբերմանը կամ վարքագծին : Դրանք կարող են արտահայտել նաև երախտիքի խոսքեր՝ ծնողի կողմից ծրագրին որևէ աջակցություն ցուցաբերելու կապակցությամբ։

Ցուցատախտակներ

Ցուցատախտակները ընտանիքների հետ հաղորդակցվելու մեկ այլ եղանակ է։ Դրանց վրա փակցված ինֆորմացիան կարող է ուղղակիորեն հղված լինել ծնողներին, ներառել գալիք ժողովների և ծնողական հանդիպումների մասին հիշեցումներ, թռուցիկներ երեխայի զարգացման, սնվելու կամ այլ կարևոր հարցերի վերաբերյալ։ Ցուցատախտակները պարզաբանում են նաև այն գործունեությունը , որը երեխաներն իրականացնում են կրթարանում։ Այստեղ կարելի է տեսնել երեխաների ստեղծագործությունները , կատարած ուղևորությունները նկարագրող ակնարկները, երեխաների ընտանիքի անդամների լուսանկարները։ Օրվա դասացուցակը, արձանագրման թերթիկները ևս կարելի է տեղադրել ցուցատախտակների վրա։

Պաշտոնական շփման ձևեր

Ժամանակ առ ժամանակ ցանկալի է հաղորդակցվել ծնողների հետ պաշտոնական , գրաֆիկով նախատեսված հանդիպումների միջոցով :

Տնային այցեր . Երեխաներին և նրանց ընտանիքներին այցելությունները ընդունված են նախադպրոցական բազում ծրագրերում։ Նման այցելությունների հիմնական նպատակն է երեխաների և նրանց ընտանիքների հետ ավելի մոտիկից ծանոթանալ : Երբեմն թե մանկավարժները և թե ընտանիքի անդամները կաշկանդվում են տնային այցի գաղափարից։ Սովորաբար երեխաները մեծ խանդավառությամբ են ընդունում իրենց տուն եկած մանկավարժին։ Նման այցելությունները պետք է կազմակերպել ընտանիքին հարմար ժամանակ։ Նախապես պետք է նշել այցելության նպատակի

մասին , այլապես ընտանիքները կարող են մտավախություն ունենալ, որ այցը վատ լուրի հետ է կապված։ Երեխայի նկարած պատկերը կամ մաթեմատիկայի հանձնարարությունը տուն տանելու միջոցով կարելի է ընտանիքի անդամների հետ օգտակար զրույց ունենալ երեխայի ուսումնական հաջողությունների մասին։

Տղամարդկանց ներգրավումը

Որպես կանոն՝ մանկապարտեզում առաջին իսկ շփումները կատարվում են երեխաների մայրիկների հետ, հայրերը, պապիկները և արական սեռի մյուս բարեկամները մի տեսակ դուրս են մնում հաղորդակցության այս շրջանակից։ Սակայն կարևոր է գործադրել ամեն ջանք՝ երեխաների կյանքում նշանակություն ունեցող տղամարդկանց ներգրավելու և երեխաների ուսուցմանը ցանկալի մասնակից դարձնելու ուղղությամբ։

Հայրիկներին մանկապարտեզային կյանք ներգրավելու նպատակով կարելի է՝

- ✓ տղամադկանց հետաքրքրությունների կողմնորոշմամբ հատուկ միջոցառումներ կազմակերպել, հրավիրել երեխաներին և նրանց հայրերին
- ✓ փորձել պարզել, թե տղամարդիկ ինչով կցանկանային աջակցել ծրագրին
- ✓ ծրագրել զուտ « տղամարդկային » միջոցառումներ ու հանդիպումներ , ուր նրանք կարող են փոխանակել իրենց մտքերն ու խոսել իրենց երեխաների մասսին
- ✓ կազմակերպել սպորտային միջոցառումներ , որտեղ հայրիկները կմրցեն իրենց երեխաների համար ՝ փորձելով լինել օգտակար , բերելով թիմին անհրաժեշտ միավորներ

Գաղտնապահություն. Գաղտնապահությունը կարելի է բնորոշել՝ որպես վստահության առկայության պայմաններում ընտանիքի անդամից ստացված տեղեկությունների պահպանում և դրանց հաղորդում մասնագետներին՝ միմիայն ընտանիքի շահերին համապատասխանող կարգով։ Երբեմն ծնողները ստիպված են

կոնֆիդենցիալ տեղեկություններ հայտնել երեխայի կամ ընտանիքում տիրող անբարենպաստ իրադրության մասին։ Մանկավարժը պատասխանատու է ողջ կոնֆիդենցիալ տեղեկատվության համար , անկախ նրանից , թե ինչ ձևով է այն ստացվել՝ բանավոր, թե գրավոր։ Նշված կարգի ինֆորմացիան այլ անձանց տրամադրելուց առաջ մանկավարժը պարտավոր է ստանալ ընտանիքի գրավոր թույլտվությունը։ Ընտանիքի անդամներին անհրաժեշտ է հավաստիացնել , որ աշխատակազմը պահպանելու է բանավոր կամ գրավոր տեսքով ընտանիքի անդամներից ստացված բոլոր տեղեկությունների գաղտնիությունը ։

ԳԼՈՒԽ 2. ԾՆՈՂԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Մանկապարտեզում ծնողական կրթության կազմակերպման հիմնական նպատակը երեխաների բազմակողմանի աճի և զարգացման վերաբերյալ ծնողներին գիտելիք տալն է: Որպեսզի դա արդյունավետ լինի կազմակերպվել են տնային այցելություններ, առանձնազրույցներ, ստեղծվել է ծնողական անկյուն, որը հնարավորություն է տվել անկաշկանդ հաղորդակցման:Նաև համագործակցության հետաքրքիր եղանակ է վիկտորինա մրցույթների կազմակերպումը ,որին յուրաքանչյուր անգամ մասնակից են դառնում ծնողները: Յուրահատուկ կարևորություն է տրվել երեխաների կյանքում նշանակություն ունեցող տղամարդկանց ներգրավելուն և երեխաների յուրաքանչյուր միջոցառմանը ցանկալի մասնակից դաձնելու ուղղությամբ: Ծնողական կրթության անցկացումը մանկապարտեզում մշտական բնույթ է կրում, սակայն երբ այն իրականացվում է նոր՝ ինտերակտիվ մեթոդով, բոլորովին այլ երանգ է ձեռք բերում և նպաստում է ծնողների անկաշկանդ մասնակցությանը: Անցկացրել ենք ծնողական կրթություն հետևյալ թեմայով «Ինչպես օգնել երեխային սթրեսային իրավիճակներում»: Թեմայի ամփոփման ժամանակ կիրառվել են խաղային, նաև համագործակցային մեթոդներ՝ խմբային, ենթախմբային, իսկ ընտանեկան կոնֆլիկտներ թեմայի ժամանակ՝ խաղ բեմականացումներ, որտեղ իրավիճակները առաջարկվել են մեր՝ աշխատակիցների կողմից, իսկ բեմադրվել են ծնողների կողմից: Լավագույն բեմականացման համար լավագույն խմբին տրվել է խրախուսական մրցանակ: Երբ մանկապարտեզում իրականացվում է որևէ միջոցառում, ծնողները հիմնականում լինում են հանդիսատեսի դերում: Բայց այս պարագայում որոշվեց, որ համագործակցությունը պետք է լինի եռակողմ՝ դաստիարակ – երեխա – ծնող: Երբ ծնողը ներգրաված է թե նախապատրաստական, թե հանդեսային բուն գործընթացին և ինքն է բոլորի ուշադրության կենտրոնում, պետք է երգի կամ աստունքի և դա պետք է անի առանց հուզվելու, միանգամից հասկանում է տվյալ աշխատանքի կարևորությունը և դժվարությունը:

Մշտապես ուշադրություն է դարձվում հայրիկների ներգրավմանը մանկապարտեզում իրականացվող միջոցառումներին, սակայն մեր հասարակությամ մեջ երեխայի դաստիարակությամբ հիմնականում զբաղվում են մայրիկները, իսկ հայրիկները իրենց գործն են համարում ապահովել ընտանիքի բարեկեցությունը: Կազմակերպված աշխատանքներից ուզում եմ առանձնացնել բաց պարապմունք «Գիտունիկների ակումբ » - ը , որին ներկա էին խմբի բոլոր երեխաների ծնողները: Ծնողները մեծ ուշադրությամբ էին հետևում պարապմունքի ընթացքին և բացահայտում իրենց իսկ երեխաների ունեցած գիտելիքները: Ծնողների համար անակնկալ ձևով պարապմունքի ամփոփիչ փուլում նրանց առաջադրվեցին տրամաբանական խնդիրներ և գլուխկոտրուկներ: Սկզբում շփոթված, բայց հետո արագ կողմնորոշվելով նրանք կատարեցին իրենց առջև դրված հանձնարարությունը:

Ծնողների ներգրավումը նմանատրպ պարապմունքներին շատ արդյունավետ է: Ծնողները հասկանում են, թե ինչպես է ընթանում պարապմունքը և ինչպես է կազմակերպվում երեխաների առօրյան մանկապարտեզում: Նաև շատ կարևոր է երեխաների և ծնողների հետ համատեղ կազմակերպել էքսկուրսիաներ, որոնք ունեն և ուսուցողական և ճանաչողական նշանակություն: Նպատակն է վերածել կազմակերպված էքսկուրսիան ուսուցողական փորձառության: Նաև խրախուսել ծնողներին երեխաների հետ համատեղ մասնակցելու մասնակցելուն:

Բացօթյա միջավայրը գեղեցիկն ընկալելու հզոր միջոց է: Երեխաները սովորում են իրենց բոլոր զգայրանների միջոցով, վայելում են ծաղիկների բուրմունքը, իրենց դեմքին զգում արևի կենարար ուժը: Իսկ ծնողները բացօթյա միջավայրում իրենց ավելի անկաշկանդ են զգում քան ցանկացած այլ վայրում:

Ծնողական կրթության ծրագրի նպատակներից մեկն էլ ընտանիքի ամրապնդումն է: Այն իրականացվում է կրթադաստիարակչական մի ամբողջ համալիր ծրագրի միջոցով, որն իր մեջ ներառում է հետևյալ աշխատանքները.

- ✓ ծնողներին իրենց երեխային մեծացնելու ջանքերում աջակցության ցուցաբերում,
- ✓ երեխայի զարգացման վերաբերյալ տեղեկատվության ապահովում,
- ✓ ծնողների և երեխայի միջև ավելի արդյունավետ հաղորդատվության ստեղծում,
- ✓ երեխաների աշխարհը ճանաչելու հմտությունների ձևավորում,
- ✓ բնականոն զարգացման , առողջ ապրելակերպի նախադրյալների ստեղծում,
- ✓ ուսումնական փորձառության ձեռքբերում։

Մենք մի տեսակ ուղեկցողի դեր ենք կատարում։ Նա, որ երեխաների զարգացման ոլորտում ավելի շատ փորձ ու գիտելիքներ ունի քան ծնողը , պատրաստ է օգնության ձեռք մեկնել վերջիններին ամեն անգամ, երբ հարկ է լինում գտնել այս կամ այն հարցի պատասխանը կամ լուծել կնճռոտ ու խնդրահարույց պրոբլեմներ, քանի որ մեր նպատակը հենց ծնողներին խնդիր լուծելու այնպիսի հիմնական հմտություններ սովորեցնելն է , որոնք հիմնականում կիրառելի են երեխա մեծացնելիս։

Թե ծնողը և թե մանկավարժները ունեն խնդիր՝ անել ամեն ինչ, որպեսզի երեխաները մեծանան երջանիկ, առողջ, կենսուրախ, բազմակողմանի զարգացած անձնավորություններ։ Ժամանակակից նախադպրոցական ուսումնական հաստատությունները աշխատում են, որ ծնողների հետ շփումները լինեն հագեցած և հետաքրքիր։ Մի կողմից մանկավարժները փորձում են պահպանել ժամանակի կողմից ստուգված լավագույն փորձը, իսկ մյուս կողմից՝ փնտրում են և աշխատում ներդնել նոր, արդյունավետ փոխազդեցության ձևեր իրենց լսաների ընտանիքների հետ, որոնց ազդեցության հիմնական խնդիրը՝ նպաստել մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությանը։ Փորձը ցույց է տալիս, որ մանկավարժների ու ծնողների ցանկացած համատեղ գործունեություն արդյունավետ է։

Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժների խնդիրն է մշտապես համագործակցել ծնողների հետ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերլուծելով հետազոտության արդյունքները՝ կարող եմ նշել, որ ծնողների ակտիվ ներգրավվումը մանկապարտեզի գործունեության մեջ նպաստում է նախադպրոցական հաստատության մանկավարժական գործունեության արդյունավետության բարձրացմանը, համագործակցության արդյունքում ծնողը դառնում է դաստիարակի գործընկերը: Բոլոր հանդիպումները, որոնք անցկացվում են մանկապարտեզում՝ սեմինար–պրակտիկումը, միջոցառումներին մասնակցությունը, էքսկուրսիաների կազմակերպումը, մրցույթ – վիկտորինայի իրականացումը միայն ողջունվում է ծնողների կողմից և բոլորը յուրաքանչյուր հանդիպումից հետո պնդում են հաջորդ հանդիպման կայացման համար: Այս ընթացքում ՝

- ուսումնասիրվել և գնահատվել են ընտանիքի և նախադպրոցական ուսումնական հաստատության միջև գոյություն ունեցող համագործակցության ձևերը,
- ապահովվել է յուրաքանչյուր ծնողի ակտիվ ներգրավումը մանկապարտեզի մանկավարժական գործընթացին,
- մշակվել և գտնվել են ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության այնպիսի միջոցներ, որոնք նպաստում են ծնող – մանկապարտեզ կապի արդյունավետությանը :

Հետազոտական աշխատանքի ընթացքում ծնողները լիարժեք ծանոթացան դաստիարակի կատարած աշխատանքի ծավալներին և կարևորությանը դարձան գործընկեր, մանկավարժի օգնական և աջակից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. « Նախադպրոցական մանկավարժություն » Ս. Ա. Մարության , Ա.Մ. Դալլաքյան /Երևան 2008 /:
2. « Պարտեզ » նախադպրոցական կրթական ծրագիր Ա. Հովհաննիսյան /Երևան 2008/:
3. «Դաստիարակենք միասին » Ա. Հովհաննիսյան /Երևան 2014 /:
4. Դ.Ռ. Փոուել « Ընտանիքները և վաղ մանկական ծրագրերը » 2011:
5. Т. А . Маркова «Детский сад и семья » /Москва 1981 /
6. Մանկապարտեզի միջին խմբի / 4 - 5 տարեկանների / կրթական համալիր ծրագիր:
7. Մանկապարտեզի կրտսեր 2 – րդ խմբի / 3 – 4 տարեկանների / կրթական համալիր ծրագիր:
8. Ծնողական կրթություն / Երևան 2005